ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ РЕГИОН
ВОСКЕАТСКОЕ СЕЛЬСКОЕ
УПРАВЛЕНИЕ

N 01-64

«03» 06 2016թ.

Արմավիրի մարզ գ. Ոսկեհատ
Հեռ. 5-29-35

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Ոսկեհատ համայնքի ղեկավարի կողմից 2016 թվականի մայիս ամսվա ընթացքում արձակված կարգադրությունը և ընդունված որոշումները:

Առդիր 4թերթ:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար Գ. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» մայիսի 2016 թ. թիվ 5-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ - ՀԱՄԱՐԱՆԻՇ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակարանային, աշխարհագրական, օբյեկտի անվանակոչման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2389-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Ոսկեհատ համայնքի ավագանու 14.08.2006թ. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական համայնքի փողոցների անվանակոչման, տների ու տնամերձերի համարակալման մասին» թիվ 2 որոշումը:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական համայնքում գտնվող քաղաքացի Վարդան Հովհաննիսյանին պատկանող 04-081-053-010 կադաստրային ծածկագրով բնակելի տանը տալ հասցե՝ Բաղրամյան 32:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր Գ. Ներսիսյան

2016 թվականի 31 մայիսի
գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» հունիսի 2016 թ. թիվ 6- Ա

ԳՈՐԾԱՎԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Կատարել փոփոխություն համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի հավելված 1-ի 9-րդ տողում՝ համաձայն հավելվածի.
   շարադրել՝ գործավարի հաստիքը սահմանել 120,0 հազար դրամ:
2. Փոփոխված հաստիքացուցակը ներկայացնել ավագանու հաստատմանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր՝ Գ. Ներսիսյան

01.հունիսի 2016թ.
գ. Ոսկեհատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ՈՍԿԵՀԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«24» մայիսի 2016 թ. թիվ 19-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքում 2016 թվականի մայիսի 23-ին ուժեղ քամու հետևանքով գյուղացիական տեսություններին պատճառված վնասների չափերն ուսումնասիրելու և արձանագրելու նպատակով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ռաֆիկ Ավագյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 5-օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ոսկեհատի գյուղական համայնքի ղեկավարին՝ կազմված ակտերը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան ներկայացնելու համար:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Ոսկեհատ համայնքի
ղ ե կ ա վ ա ր՝ Գ. Ներսիսյան

2016 թվականի մայիսի «24»
գ. Ոսկեհատ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՀԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի
ԹԻՎ 11-Ա
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝
Ռաֆիկ Ավագյան- գյուղապետի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝
Նիկոլայ Տեր-Խաչատրյան - ավագանի

Սերոբ Դիշլանյան - ավագանի

Գագիկ Նաղանյան - առաջին կարգի մասնագետ

Արմեն Գյոզալյան - ավագանի